

ԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՎ

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ ՁՈՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» I-ին աստիճանի մեդալով: Նշենք, որ սույն պարգևը շնորհվում է «Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգում երկարամյա և արգասաբեր աշխատանքի, պետական շինարարության գործում ներդրած նշանակալի ավանդի համար»:

Ռադիկ Մարտիրոսյանին շնորհված այս պարգևը գիտությունների ազգային ակադեմիայի գործունեության և ընդհանրապես հայրենական գիտության նկատմամբ բարձր գնահատականի ու նաև գիտության նկատմամբ մշտական հոգաձության վկայությունն է:

Շնորհավորում ենք ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին՝ հայրենիքի բարձր պարգևին արժանանալու առթիվ:

Եղեգնյա գրքով երգեցի փառքեր.

- Զեզի ընծա՜, իմ հայրենիք,-
Սոսյաց անտառեն էի զայն կրտեր...
- Զեզի ընծա՜, հին հայրենիք,-
Եղեգնյա գրքով երգեցի քուրմեր,
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ:

Եղեգնյա գրքով երգեցի կարոտ.

- Զեզի ընծա՜, հայ պանդուխտներ,-
Ան տարաշխարհիկ բույսի մ՛էր ծղոտ...
- Զեզի ընծա՜, հե՛գ պանդուխտներ,-
Եղեգնյա գրքով երգեցի հարսեր,
Ընդ եղեգան փող ո՛ղբ ելաներ:

Եղեգնյա գրքով երգեցի արյուն.

- Զեզի ընծա՜, սուրի՛ զոհեր,-
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կրնյուն...
- Զեզի ընծա՜, կրակի՛ զոհեր,-
Եղեգնյա գրքով երգեցի վերքեր,
Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ:



Եղեգնյա գրքով որբ տունս երգեցի.

- Զեզի ընծա՜, հա՛յր ալեհեր,-
Ցամբած աղբյուրեն մեր զայն հոտեցի...
- Զեզի ընծա՜, մա՛յր կարեվեր,-
Եղեգնյա գրքով օջախս երգեցի,
Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ:

Ու պայքա՛ր, պայքա՛ր, երգեցի.

- Զեզի ընծա՜, հա՛յ մարտիկներ,-
Գրիչս եղավ անթոց սըրտերու հնոցի...
- Զեզի ընծա՜, քա՛ջ մարտիկներ,-
Եղեգնյա գրքով վրեժ երգեցի,
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ:

ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ



ԾՅ Մ. ՇԻ ԳԻՏՈՒՆՈՒՄԻ ԳԻՏՈՒՆՈՒՄԻ ԳԻՏՈՒՆՈՒՄԻ

Երվանդ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի թուրքագիտության դպրոցի հիմնադիրներից և կարկառուն մերկայացուցիչներից մեկը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Ղազարի Սարգսյանը, ծնվել է 1913-ին Սիսիանի շրջանի պատմական Բռնակոթ գյուղում: Բարձրագույն կրթությունը ստացել է Լենինգրադի (այժմ՝ Պետերբուրգ) պետական համալսարանում: 1942-ին հաջողությամբ ավարտելով ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան, վերադարձել է Հայաստան և աշխատանքի անցել ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարությունում՝ որպես Թուրքիայի գծով պատասխանատու աշխատակից: Այդ ժամանակաշրջանում նա գործում մասնակցություն է ունեցել Հայկական հարցին և Թուրքիայի հակահայկական քաղաքականությանը վերաբերող մի շարք կարևոր զեկուցագրերի պատրաստմանը, որոնք ուղարկվում էին

Մոսկվա և օգտագործվում 1945-1947-ին Թուրքիայի նկատմամբ ԽՍՀՄ քաղաքականությունը մշակելու նպատակով:

Հետագայում Սարգսյանն աշխատել է գիտությունների ակադեմիայի համակարգում: Երբ 1971-ին ստեղծվեց արևելագիտության ինստիտուտը, նա դարձավ դրա առաջին աշխատակիցներից և երկար տարիներ ղեկավարեց թուրքագիտության բաժինը: Նրա ջանքերի շնորհիվ բաժինը վերածվեց Թուրքիայի մոր և նորագույն պատմության ուսումնասիրության և մասնագետների պատրաստման կարևոր կենտրոնի:

1946-ին Սարգսյանը հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 1963-ին նրա դոկտորական թեզի պաշտպանությունը Մոսկվայում վերաճել է սուր և սկզբունքային բանավեճի՝ խիստ քաղաքականացված խորհրդային թուրքագիտության մոսկովյան դպրոցի ներկայացուցիչների հետ և արժանացել

լայն արձագանքի գիտական և հասարակական շրջանակներում: Այդպես էր կայանում հայկական թուրքագիտության հեղինակությունը: Նրա թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները կարևոր ներդրում են Թուրքիայի և Արևմտյան Հայաստանի մոր դարի պատմության ուսումնասիրության բնագավառում:

Պրոֆեսոր Սարգսյանի գրչին են պատկանում բազմաթիվ մենագրություններ և ավելի քան 100 այլ գիտական աշխատություններ, որոնք իրավամբ մեծ համբավ են բերել ոչ միայն նրան, այլև հայկական թուրքագիտությանը: Նրա ամենահաջողված գիտական աշխատությունը «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914-1918» մենագրությունն է, որը 1962-ին հրատարակվել է ռուսերեն, իսկ 1964-ին՝ հայերեն: Այս գրքում հեղինակը, լայնորեն օգտագործելով արխիվային և վավերագրական այլ նյութեր, համոզիչ կերպով ցույց է տալիս Օսմանյան կայսրության ժալալապաշտական նկրտումներն Անդրկովկասի, գլխավորապես Արևելյան Հայաստանի նկատմամբ, վեր

հանում հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման երիտթուրքական քաղաքականության անմիջական կապը նրա պանթուրքիստական գալթոդական ծրագրերի հետ: Մենագրության կարևոր արդյունքներից է հեղինակի եզրահանգումն այն մասին, որ քեմալական Թուրքիան հանդես է եկել որպես Օսմանյան կայսրության հակահայկական քաղաքականության շարունակող: Գիրքը նշանակալից դեր է կատարել «վաթսունականների սերնդի» միջավայրում Թուրքիայի մասին հստակ պատկերացումների ձևավորման համար: Այն այսօր ևս պահպանում է իր գիտական նշանակությունն ու քաղաքական այծեականությունը: 1965-ին Բեյրութում հրատարակվել է նրա «Հայերի ֆիզիկական ոչնչացման ծրագրի իրագործումը երիտթուրքերի կողմից 1915-1916 թվականներին» հատորը:

Սարգսյանի գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նաև «Օսմանյան կայսրության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և պետությունները ժժ դարի վերջին քառորդում և Ի դարի սկզբին» >5

Մտորումներ «THE WALL STREET JOURNAL»-ի մի հոդված կարդալուց հետո

«The Wall street journal» թերթը Միացյալ Նահանգների շատ հեղինակավոր պարբերականներից է: Վիեննայում եղած ժամանակ կարդացի այդ թերթի 2012 թվականի նոյեմբերի 9-11-ի հերթական համարում գտնված «Թանգարանը որպես հայելի» («The Museum as Mirror») հոդվածը՝ ուղարկված Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիից. հեղինակը «The Wall street journal»-ի համար արվեստի ու մշակույթի վերաբերյալ հոդվածներ գրող Մելիք Կայլանն էր: Հոդվածը նվիրված էր Վրաստանի պետական պատմական թանգարանին ու ներկայացնում էր շատ հետաքրքիր հարցադրույց այդ թանգարանի տնօրեն Դավիթ Լորդկիպանի-ձեի հետ: Վերջինս 49 տարեկան է: Նա մարդաբանության գիտաճյուղի գծով դոկտորական ատենախոսություն է պաշտպանել 1991-ին Մոսկվայում, հետո սովորել է Եվրոպայում, ի վերջո բարձրագույն տիպի կառավարման դասընթացներ է անցել Հարվարդի համալսարանում: Ես բոլորովին չեմ ուզում որևէ քննադատական խոսք ասել այն ամենի մասին, ինչ Դավիթ Լորդկիպանի-ձեի պատմում է իր երկրի անցյալի, աշխարհում նրա կատարած դերի մասին: Նա իր ազգի նվիրյալն է և ուզում է միջազգային հանրությանը ներկայացնել իր երկիրը առավելագույնս: Պարզապես մենք՝ հայերս, վերջներս նրա օրինակը աշխարհին մեզ ներկայացնելիս, որովհետև մենք ունենք բոլոր հիմքերը մեր պատմության լուսավոր կողմերով երևալու: Հիշենք մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի պատգամը, որը հիշեցնում էր հայ գրողներին ու պատմաբաններին, թե մենք ենք մեղավոր, որ մեր ազգի արածները չգրեցինք, չքննեցինք, ուրիշ մեզ գրել էլ չիմացան մեր անօրինակ հսկաների անունները: Դավիթ Լորդկիպանի-ձեի ասում է, թե Վրաստանի Ազգային թանգարանն օգնում է գիտակցելու իրենց ազգի ոգին: Թանգարանի տնօրենը Վրաստանը տեսնում է որպես վաղ հողագործական երկիր աշխարհում, Յասոնի ու Մեդեայի պատմությունը ներկայացնում է որպես հնագիտական իրողություն և ոչ առասպել («the time of Jason and Medea was not just a myth but archaeological reality»), հիշեցնում, թե Վրաստանն արդեն չորրորդ դարում քրիստոնյա էր, և նրա մշակույթը ազդել է բյուզանդական վրա: Նա փաստում է, թե Վրաստանն անկախ երկիր է, չկան Մոսկվայի և Խորհրդային Միության կաշկանդող պահանջները, և իրենք իրենց հնամյա մետաղագործությունն ու ոսկերչական զարդերն ուղարկում են՝ ցուցադրվելու Միացյալ Նահանգների հռչակավոր թանգարանները, որոնցից մեկն է Լոս Անջելեսում գտնվող հռչակավոր «Getty Center»-ը: Նման թվարկումներ էլի կան: Հիմա ես վերադառնում եմ մեզ և մեր անելիքներին: Իսկ դրանք շատ-շատ են և խստորեն պարտավորեցնող: 1932 թվականին Փարիզում լույս տեսած «Nouveau petit Larousse illustre» հանրագիտարանում հոդվածներ կան և՛ Տիգրան Մեծի, և՛ Մովսես Խորենացու մասին (տե՛ս էջ 1711, 1543): Մովսես Խորենացու մասին գրված է. «Մովսես Խորենացի, V դարի հայ մատենագիր, կոչվել է հայերի Հերոդոտ» («Mounse de Khoren, ecrivain armenien du V^e siecle, surnomme l' Herodote de l' Armenie»): Իսկ հիմա բացենք եվրոպական լեզուներով վերջին տասնամյակներին լույս տեսած հանրագիտարանները, որոնք ավելի ծավալուն են ու բազմա-հատոր: Նրանցում այլևս չկան ո՛չ Տիգրան Մեծը և ո՛չ էլ Մովսես Խորենացին:

Թե՛ Վատիկանի թանգարանի հնագույն քարտեզներում և թե՛ ընդամենը մի քանի օր առաջ իմ տեսած Վիեննայի Ալբերտինա թանգարանի XV դարի և Վենետիկի Դոժերի պալատի վերստին XV դարի քարտեզների վրա հսկա տառերով Սև և Կասպից ծովերի միջև ընկած Մեծ Հայքի տարածքի վրա գրված է Արմենիա-Հայաստան, Դոժերի պալատին վրա կա նաև երևան քաղաքը: Հիշեցնենք, որ XV դարում մենք պետականություն չունեինք, Հայաստանը բաժանված էր Թուրքիայի և Պարսկաստանի միջև, սակայն հայերն իրենց մտավոր կարողություններով այնքան բարձր էին, որ աշխարհը նրանց ճանաչում էր որպես առանձին երկիր: Հիշենք բյուզանդագետ Շարլ Դիլի կարծիքը հայկական եկեղեցաշինության՝ Եվրոպայի եկեղեցիների վրա ունեցած ազդեցության մասին: Նրանք, ովքեր եղել են Իտալիայի ու Եվրոպայի որոշ նշանավոր եկեղեցիներում ու տեսել են Անիի Մայր տաճարի կամարները, դրանց մեջ մեծ նմանություններ կտեսնեն՝ հիշելով, որ Անիին ավելի հին են: Ամեն անգամ Եվրոպայի տարբեր երկրների հյուրանոցներում, որոշ հիմնարկներում, ոչ հայերի տներում ոտքիս տակ տեսնում եմ հայկական զարդանախշերով գորգեր, այդ նախշերն այնքան ընտանի են. տեսել եմ պապիս տանը եղած հնագույն գորգերը, բայց ոչ մեկը դրսում դրանք հայկական չի համարում: Երբ 1986-ին Ռուբենի տուն-թանգարանում տեսա բազմաթիվ հայկական կարպետներ ու թանգարանի աշխատակցուհուն հարցրի, թե դրանք ո՞ր երկրի կարպետներ են, նա պատասխանեց, թե չգիտի, հետո ավելացրեց՝ գուցե պարսկական:

Ինչքան էլ գրում եմ ու խոսում գլոբալացման մասին, նույնքան էլ ամեն ժողովուրդ ու ազգ որպես հակազդեցություն առավել շեշտում է իր ազգային նկարագիրը: Եվ ճիշտը դա է: Աշխարհը մի ընտանիք պետք է լինի իր բարությանը ու խաղաղասիրությանը. սա է նույնականության կարևոր դերը, սա կիրկի աշխարհը աղետներից: Բայց ամեն մի ժողովուրդ աշխարհին պետք է ներկայանա սեփական դեմքով, մտածողությամբ, արժանապատվությամբ ու համայն մարդկության կյանքում բերած իր ներդրումներով:

Մեր քաղաքակիրթ անցյալը մեզ հիշեցնում ու պարտավորեցնում է այն չմոռանալ, այլ առաջ գնալ առավել կատարելագործելու մեր մեջ եղած լավագույնը, որի բոլոր հիմքերը կան հայի ազգային գենի մեջ:



Հիշում եմ, երբ տարիներ առաջ հեռուստատեսությամբ քննարկում եղավ, թե ինչ դնել Լենինի հանված արձանի տեղում, ես առաջարկեցի Տիգրան Մեծի արձանը: Ինձ ասացին, թե վերջինս նվաճող է եղել: Հիշեցրի, որ նշանավոր նվաճողների արձանները դրված են իրենց երկրներում: Ինձ հակաճառողները երևի մոռացել էին մեծ պատմաբան Նիկողայոս Ադոնցի՝ Տիգրան Մեծին տված ծշգրիտ բնութագրումները. «Տիգրան Մեծն իր արժանավայել տեղը պետք է զբաղեցնի Արևելքում երբևէ իշխած տիրակալների շարքում: Նա արժանացել է «Մեծ» տիտղոսին՝ պատվավոր մի կոչման, որ պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին»: Պատմաբանը հիշեցնում է, թե Տիգրանը հիմք դրեց մի քաղաքականության, որը պետք է դարերի խորքից գոյատևեր մինչև մեր օրերը, դառնար պարտավորեցնող դեղատոմս բոլոր ժամանակների քաղաքագետների համար:

Շատ կուզեի՝ հիշեինք մեծ պատմաբանի և Տիգրան Մեծի դասերը:

Աելիտա ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ

Հարյուրամյա վարկածի մատուցումը որպես հեղափոխական հանցագործություն

Ձեր թերթի համարներից մեկում հրապարակվել է բանասիրության դոկտոր Շավիղ Գրիգորյանի «Գիտաբանասիրական նորահայտ վարկածներ» հոդվածը, որը նրա 2003 թվականին հրատարակած «Հայ աշուղական գրականության պատմություն» գրքից է վերցված (ի դեպ այս գիրքը նաև նրա դոկտորական թեզն է եղել 2002թ.): Մենք նույնպես դեմ ենք Ակնի հայրենների հեղինակ Ն. Քուչակին համարողների կարծիքին և համաձայն ենք Շավիղ Գրիգորյանի և նրա պաշտպանած վարկածի կողմնակիցների հիմնավորումներին, որը սակայն նոր չէ, ինչպես փորձում է ներկայացնել Շ. Գրիգորյանը: Իբրև թե ինքն է այս վարկածի հեղինակը: Այս վարկածը (Քուչակին հայրենների հեղինակ չհամարելու) գոյություն ունի արդեն հարյուր տարի: Շատերն են կասկածել Քուչակի անունով միջնադարից մեզ հասած ժողովածուների, Քուչակի հեղինակային իրավունքի վրա, ինչպես Մ. Աբեղյանը, Վ. Գույումջյանը և այլք: Օրինակ՝ Մ. Աբեղյանը գրեց. «Ակնա ժողովր-

դական երգերը շատ նման են Քուչակի երգերին իրենց դարձածներով և ձևով, երբեմն ամբողջ բովանդակությամբ և ձևով ու չափով: Պետք է կարծել կամ Քուչակն օգտվել է այդ երգերից, կամ նա երկար ապրել է այնտեղ, որ նրա երգերն այդտեղ ժողովրդականացել են և նա կյանքի վերջում միայն հաստատվել է Խառնակոնիում»:

Տե՛ս նաև «Հայոց հին գրականության պատմություն», բ հատոր, Երևան, 1946: Բերենք նաև Քուչակի հայրենների հեղինակ լինելը մերժող նաև մեկ ուրիշ հեղինակ Վ. Գույումջյանի՝ 1913 թ. նույնպես հարյուր տարի առաջ գրած կարծիքը, որը վերադարձվել է «Ակն և ակնցիք» գրքում՝ «Քուչակ ժժ դարու աշուղ մըն է, մինչդեռ Ակնա Անտունիները շատ ավելի հեռավոր դարեր է, որ մեզի կիսանին» (Ակն և ակնցիք, էջ 407, Փարիզ, 1952):

Ի դեպ, այս հեղինակի կատարած մեծ գործի մասին խոսք անգամ չկա Շավիղ Գրիգորյանի ո՛չ գրքում, ո՛չ գրքից կորված հոդվածում:

Ո՞վ էր Վահան Գույումջյանը: Նա այն անձնավորությունն էր, որի մասին տեղեկություններ է հաղորդում Հ. Աճառյանը: Սանասարյան վարժարանում (1894-1895 թթ.) դասավանդելիս նա Ակնի բարբառի բառերի արտասանությունը և իմաստի ճշտությունը ստուգում էր միակ ակնեցի աշակերտի՝ Վահան Գույումջյանի միջոցով (Ակն և ակնցիք, էջ 361):

Վահան Գույումջյանը, ավարտելով վարժարանը, իր կյանքի նպատակն է դարձնում Ակնի անտունիների և հայրենների հավաքումը կենդանի անձանցից:

Առաջին գրի առած երգերը տպագրում է Պոլսում Դանիել Վարուժանի և Հակոբ Սիրունու կողմից հրատարակվող «Նավասարդ» տարեգրքում, 1913 թվականին: Ոգևորված այս հեղինակավոր անձանց խրախուսանքներից՝ նա շարունակում է հավաքել հայրեններն ու անտունիները նաև իր կնոջ օգնությամբ: Նա գրի է առնում նաև տարբերակներ ոչ միայն Ակն քաղաքից, այլև շրջակա գյուղերից, նաև հայ-հոռոմների բնակավայ-

րերից, ինչպես Վանի, Չորակ, Մուշեղյա, Շրգու: «Այս գյուղին մեջ է, որ ամենեմ ավելի հարազատօրէն և մաքուր լեզուով գոյութիւն ունէին Ակնա օրորներն ու Անտունիները» (Ակն և ակնցիք, էջ 123):

Եթե Շ. Գրիգորյանը տեղյակ լիներ Վ. Գույումջյանի հավաքած անտունիներին, հայրեններին և նրանց փոփոխականներին, ինչպես նաև Ակնի հայ քրիստոնյաներից մեկուսացած հայ-հոռոմներին, որոնք հունադավան էին դարձել V-VI դարերում, նրանք նույնպես հայրենները պահպանում էին, ինչպես Վ. Գույումջյանն է ընդգծում «Ամենեմ ավելի հարազատօրէն և մաքուր լեզուով»: Կասկածից դուրս է, որ նրանք Քուչակից չէին կարող սովորած լինել այդ երգերը, այլ ժառանգել էին իրենց ծնողներից, Քուչակից հարյուրավոր տարիներ առաջ:

Ուրեմն Շավիղ Գրիգորյանը կամ իսկապես անտեղյակ է եղել Վ. Գույումջյանի հավաքած Ակնի ծովածավալ երգերին, կամ լռում է այդ մասին, որպեսզի վարկածի նորահայտությունը իր անվամբ ներկայացնի:

Ներսես ՄԿՐՏՉՅԱՆ
Բանասիրական գիտությունների
դոկտոր



ՀՀ ԳԱՍ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱՍ արտասահմանյան անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի ոչ գծային անալիզի և օպտիմիզացիայի ամբիոնի վարիչ Արամ Հարությունովը ծնվել է 1956 թ. հոկտեմբերի 6-ին Թբիլիսիում:

Հայրը՝ Վլադիմիր Հարությունովը, դասավանդել է օտար լեզու, մայրը՝ Ամալյա Սարգսյանը, աշխատել է որպես ճարտարապետ:

Արամ Հարությունովը ողջ կյանքը ապրել է Մոսկվայում, նախնական կրթությունը ստացել է այն տարիների մաթեմատիկական թեքումով Մոսկվայի լավագույն 2-րդ դպրոցում և ավարտելուց պես ընդունվել Մոսկվայի պետական համալսարանի հաշվողական մաթեմատիկայի



Արամ Վլադիմիրի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ

և կիրառական ֆակուլտետ:

Գերազանց ավարտելով բուհը՝ 1978 թ. նա ընդունվում է ասպիրանտուրա Մոսկվայի պետական համալսարանի հաշվողական մաթեմատիկայի և կիրառական ֆակուլտետի օպտիմալ ղեկավարման ամբիոնում: 1981թ. Արամ Հարությունովը հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը «Արագաշարժության խնդիրներում օպտիմալ ժամանակի ֆունկցիայի ողորկությունը» թեմայով՝ Նիկոլայ Տինյասկիի ղեկավարությամբ: Պաշտպանելուց անմիջապես հետո նա սկսեց դասախոսել ժողովուրդների բարեկամության համալսարանում, իսկ 1986 թ. նա արդեն դիֆերենցիալ հավասարումների և ֆունկցիոնալ անալիզի ամբիոնի ղոցնետ էր:

1988թ. Արամ Հարությունովը պաշտպանեց դոկտորական ատենախոսություն «Օպտիմալ ղեկավարման խնդիրների գրգռումները և էքստրեմումի առաջին և երկրորդ կարգի անհրաժեշտ պայմանները» թեմայով:

1991թ. գիտական և մանկավարժական բեղուն աշխատանքի համար նրան շնորհվեց պրոֆեսորի կոչում: 1997թ. նա գլխավորում է այդ ամբիոնը, որը այժմ վերանվանվել է ոչ գծային անալիզի և օպտիմիզացիայի:

Իր ոլորտի առաջնակարգ մասնագետ Հարությունովին 1993թ. առաջարկեցին դասախոսել նաև Մոսկվայի պետական համալսարանի հաշվողական մաթեմատիկայի և կիրառական ֆակուլտետում, որտեղ կարգում է «Բազմարժեք անալիզ»:

Հարությունովն այսօր Ռուսաստանում էքստրեմալ խնդիրների տեսության, ինչպես նաև օպտիմալ ղեկա-

վարման և ոչ գծային անալիզի լավագույն մասնագետներից մեկն է:

Հարությունովը ստեղծել է ընդհանուր տեսքի սահմանափակումներով էքստրեմալ խնդիրներում օպտիմալության պայմանների հետազոտման մաթեմատիկական մոր ապարատ: Այդ տեսությունը լուրջ ներդրում է ինչպես ոչ մորմալ խնդիրների հետազոտման, այնպես էլ էքստրեմալ խնդիրների ընդհանուր տեսության զարգացման ոլորտում:

Հարությունովի աշխատանքներում մեծ տեղ են գրավում դասական վարիացիոն հաշվի խնդիրները: Այդ խնդիրների հետազոտման համար ուսումնասիրվել են չվերասերված ինտեգրալ քառակուսային ձևեր: Դրանք Յակոբիի և Լեժանդրի հայտնի արդյունքների զարգացումն են: Այդ ոլորտում նա ստացել է մի շարք հիմնարար արդյունքներ:

Վերջին տարիներին Ա. Հարությունովի կողմից առաջարկվել է մոր մոտեցում մետրիկական տարածություններում ծածկող արտապատկերումների հետազոտման համար: Նրա կողմից ապացուցվել են թեորեմներ համընկող կետերի գոյության մասին, ինչպես միարժեք, այնպես էլ բազմարժեք արտապատկերումների դեպքում, ապացուցված է համընկող կետերի կայունությունը: Բոլոր այդ արդյունքները ստացել են տարբեր կիրառություններ ոչ գծային անալիզում և օպտիմիզացիայում:

Արամ Հարությունովի կինը՝ Նատալյա Չեռնիկովան, մասնագիտությամբ քիմիկոս է և դասավանդում է Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանում: Նրանք ունեն երկու զավակ՝ Մարջան Հարություն-

յունովան ճարտարապետ է, իսկ որդին՝ Անդրոնիկը, ավարտելով Մոսկվայի պետական համալսարանը, այժմ սովորում է Վ.Ա. Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի ասպիրանտուրայում:

Հարությունովը մեծ ուշադրություն է դարձնում հայազգի երիտասարդ մասնագետների մասնագիտական պատրաստմանը և մեծ ջանքեր գործադրում իր ղեկավարած ամբիոնի և Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հետ համատեղ մագիստրոսական ծրագրով ուսուցում կազմակերպելու ուղղությամբ:

Հարությունովը 150 գիտական հոդվածների և երեք մենագրության հեղինակ է: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են ավելի քան 10 թեկնածուական և մեկ դոկտորական ատենախոսություն:

Նա «Դիֆերենցիալ հավասարում», «Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանի տեղեկագրի», «Գործողությունների հետազոտման հարավսլավական հանդեսի», ինչպես նաև «Թայվանի մաթեմատիկական հանդեսի» խմբագրական խորհուրդների անդամ է:

Հարությունովը շուրջ վեց տարի եղել է Ռուսաստանի Դաշնության մաթեմատիկայի և մեխանիկայի գծով ԲՈՒՀ-ի փոխնախագահը: Նա ՌԲԳԱ իսկական անդամ է: Պրոֆեսորը, որպես հրավիրյալ դասախոս, հաճախ է մեկնում արտերկիր:

Հարությունովը 2010 թվականից պարբերաբար այցելում է Արցախի պետական համալսարան և դասախոսում որպես հրավիրյալ պրոֆեսոր: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել 2011 թ. Հայաստանում և Արցախում կազմակերպված «Դիմաձևի համակարգերի, ոչ գծային անալիզ և կիրառություններ» թեմայով միջազգային գիտաժողովի կազմակերպմանը: Երևանում եղած ժամանակ Հարությունովը մի շարք սեմինարներ է անցկացրել ԵՊՀ-ի և Սլավոնական համալսարանի մասնագետների համար: Հայաստանի Հանրապետության կրթության մասնադարձությունը Հարությունովին պարգևատրել է ոսկե մեդալով:

Հաշվի առնելով Արամ Վլադիմիրի Հարությունովի գիտական, մանկավարժական վաստակը, ինչպես նաև սերտ կապերը մայր հայրենիքի հետ՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2011 թվականին նրան ընտրել է ԳԱՍ արտասահմանյան անդամ: Արամ Հարությունովը այսօր էլ մեծ ջանքեր է ներդնում մաթեմատիկայի ոլորտի զարգացման գործում և սերտորեն համագործակցում Հայաստանի գիտական շրջանակների համապատասխան մասնագետների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
ղոցենտ, ՀՀ ԳԱՍ սփյուռքի բաժնի
գիտաբարոտուղար

ԱՄԵՐԻԿԱԸՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՆ

Հայերն Ամերիկայի Միացյալ Նահանգներ են մեկնել անձնական, կրթական, տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական և այլ հանգամանքներից ելնելով: Սկզբում այն կրթական ու տնտեսական նախապայմաններից դրդված պանդուխտների (գլխավորապես՝ անուրի երիտասարդներ՝ ուսանող, առևտրական, արհեստավոր, հողամշակ, գործավոր) ժամանակավոր բնույթ կրող տեղաշարժ էր, որը Օսմանյան կայսրությունում հայության նկատմամբ գործադրված պարբերական ջարդերի (1894-1896 թթ., 1909 թ.) և Հայոց ցեղասպանության (1915-1923 թթ.) հետևանքով վեր է ածվել տնտեսական, քաղաքական, մշակութային ու կրոնական ապականվ կյանքի հեռանկարից զրկված և հասարակական ու սեռատարիքային բոլոր շերտերը ներառող զանգվածային գաղթի՝ ընդգրկելով կայսրության ողջ հայաբնակ շրջանները, այդ թվում՝ նաև Կիլիկիան:

1909 թ. Ադանայում (Կիլիկիա) երիտթուրքերի կողմից իրականացված զարհուրելի ջարդերը վերջնականապես ի դերն են արել իրենց «դեմոկրատական» հռչակած իշխանությունների նկատմամբ հայության փախույթային վերջին հույսերը՝ մղելով նրանց դեպի անձանոթ հորիզոններ: Թեև ջարդերը տեղի էին ունեցել Կիլիկիայում, հայերը հեռանում էին կայսրության հայաբնակ գրեթե բոլոր շրջան-

ներից, քանի որ այդ վայրերում ևս ցանկացած պահի նույնպիսի իրավիճակում հայտնվելու սարսափը չափազանց մեծ էր:

Նոր երկրում պանդուխտ հայերի և գաղթական բեկորների թվի ստվարացումով և այնտեղ նրանց տարածմանը զուգընթաց՝ հայաշատ գրեթե բոլոր վայրերում ազգային համայնքման ու կազմակերպման, ամերիկյան համայնակու միջավայրում ազգային ինքնությունը պահպանելու, ինչպես նաև հայրենի բնօրրանի և ժողովրդի հետ կապն ավելի գործուն և հարատև դարձնելու նպատակով կազմավորվել են օտարության մեջ ազգապահպան կարևոր դեր ու նշանակություն ունեցող կառույցներ (եկեղեցի՝ Առաքելական, Ավետարանական, Կաթոլիկ, դպրոց, պարբերական մամուլ՝ հայերեն, հայատառ թուրքերեն, անգլերեն), ինչպես նաև կրթական, մշակութային, բարեսիրական, հոգևոր, սոցիալական, քաղաքական ու այլ բնույթի մեծ ու փոքր ազգային միություններ ու տարբեր կազմակերպություններ (հայրենակցական, կուսակցական, մասնագիտական և այլն):

Ամերիկահայերն իրենց գործուն մասնակցությունն են ունեցել Առաջին աշխարհամարտի տարիներին և հետո Կովկասում, ապա՝ Կիլիկիայում կազմակերպված կամավորական շարժումներին՝ սկսած 1915 թ. Վանի ինքնապաշտ-

պանական կռիվներից մինչև 1918 թ. Արարայի հերոսամարտը՝ Ամտանտի տեսությունների, ցարական Ռուսաստանի և Ֆրանսիայի զորամիավորումների հետ կողք կողքի քաջաբար մարտնչելով գերմանական ուժերի և երիտթուրքական ու թեմալական իշխանությունների դեմ: Կամավորական շարժման նշանաբանն էր՝ «Ինքնավարություն վեց վիայթներու և անոնց անբաժան մասը կազմող Կիլիկիայի»:

1916 թ. հոկտեմբերի 27-ին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունները, Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի մասնակցությամբ, Լոնդոնում համատեղ համաձայնության էին եկել (Սալբու-Պիկոյի համաձայնություն) կազմել հայ, ինչպես նաև արաբ կամավորներից բաղկացած «Արևելյան լեգեոն» («Legion d'Orient») անվանումը կրող զորամիավոր, որը, իբրև օժանդակ ուժ, պատերազմի տարիներին ֆրանսիական բանակի կազմում պիտի կռվեր բացառապես Ասիական թուրքիայի մաս կազմող Սիրիայում և Կիլիկիայում, այնուհետև՝ թուրքերի դեմ հաղթանակից հետո, որպես քաղաքապահ ուժ, ապահովեր ֆրանսիական հոգատարության ներքո Կիլիկիայի ինքնավարությունը: «Արևելյան լեգեոնի» կազմակերպման ծախսերն իր վրա էր վերցնելու ֆրանսիական կառավարությունը,

որը հոգալու էր կամավորների տեղափոխման ճանապարհածախսը, հիվանդության ու հաշմանդամության ծախսերը: Կամավորները, որոնք պետք է ներկայացնեին լավ վարքի վկայական, մարզվելու և ղեկավարվելու էին ֆրանսիական սպաների և ենթասպաների կողմից, վարձատրվելու էին ֆրանսիական զինվորների նման, ստանալու էին նույն պարենը, ինչ ֆրանսիացի զինվորը: Լեգեոնը սկզբնապես հաստատվելու էր Կիպրոսում՝ Մոնարկա ծովեզրյա սարահարթային վայրում, որտեղ ժամանելու էին Մարսելի, Բորդոյի և Փորթ Սալոնի գրասենյակներում գրանցված տարբեր վայրերից ժամանած հայ կամավորները: Սալբու-Պիկոյի համաձայնագրի մեջ նշված էր. «1. Որ կամավորները ոչ Ֆրանսական, ոչ ալ Եւրոպական ուրիշ ճակատներու վրայ պիտի կռուին, այլ միայն ու միայն Ասիական Թուրքիոյ մէջ պիտի գործածուին» իրենց դարաւոր թշնամին դեմ պատերազմելու եւ ազատագրելու իրենց մայրենի հողը: 2. Որ՝ Ֆրանսա, Դաշնակիցներու յաղթանակէն յետոյ, պիտի նուիրուի Կիլիկիոյ ինքնավարութիւն ապահովելու գործին, իր հոգատարութեան ներքէլ»:

1916 թ. նոյեմբերի 26-ին հիմնվել էր օսմանյան հպատակներից կամավոր հիմունքներով հավաքագրված «Արևելյան լեգեոնը»: Կամավորագրումը սկսվել է Եգիպտոսում, որի կորիզը կազմել են 600 մուսուլմաններ (Ֆրանսիայի շնորհիվ Փորթ-Սալոնում ապաստանածներից), ապա նաև՝ 300 եգիպտահայեր, օսմանյան բանակից ու այլ վայրերից փախստական 236 հայեր:



ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉԸ

Ակադեմիկոս ԷՄԻԼ ՅՈՅԿԻ
ՄԻՐԶԱՐԵԿՅԱՆԻ ԺՆՆՈՂՅԱՆ
90-ամյակի առթիվ:

Է. Յ. Միրզաբեկյանը ծնվել է 1922 թ. դեկտեմբերի 12-ին Երևանում հանրապետության վաստակավոր բժիշկների ընտանիքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1940թ., գորակոչվել է Կարմիր բանակ: Հայրենական մեծ պատերազմի սկզբում՝ Է. Միրզաբեկյանը հրետանային ուսումնարանի կուրսանտ էր, իսկ 1942 թվից նա մասնակցել է ռազմական գործողություններին Անդրկովկասյան, ապա՝ Հարավային ռազմաճակատներում: Նրա մարտական ուղին, ծանր վիրավորվելուց հետո, ավարտվել է Հունգարիայում 1945 թ.: Պատերազմում դրսևորած արիության և սխրագործությունների համար պարգևատրվել է Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով: Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո Է. Միրզաբեկյանը զորացրվել է և, վերադառնալով Երևան, ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: 1950թ. ավարտելով համալսարանը, աշխատանքի է անցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում: Հաջորդ տարվա դեկտեմբերին նա ընդունվել է այդ ինստիտուտի ասպիրանտուրան և գործուղվել է ԽՍՀՄ ԳԱ աշխարհափոխակ Պ. Ն. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտ: 1953-1955 թթ. նույն ինստիտուտում աշխատել է որպես կրտսեր գիտաշխատող: 1955 թ. Է. Միրզաբեկյանը, վերադառնալով Երևան, աշխատանքի է անցել Բյուրականի աստղադիտարանում, սկզբում որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող, իսկ 1958-1960 թթ.՝ ռադիոֆիզիկայի բաժնի վարիչ:

Հաշվի առնելով ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի աճող դերը գիտության և արդյունաբերության մեջ՝ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանի և Է. Միրզաբեկյանի նախաձեռնությամբ 1960 թ. հիմնվում է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը (ՌՖԻ), որի տնօրենը մինչև իր կյանքի վերջը եղել է Է. Յ. Միրզաբեկյանը: Համախմբելով իր շուրջը տաղանդավոր երիտասարդ գիտնականների՝ նա հիմնել է գերբարձր հաճախությունների ռադիոֆիզիկայի գիտական դպրոցը, որը մեծ ճանաչում և հեղինակություն է ստացել ԽՍՀՄ-ում: Դրա վառ ապացույցն են ՌՖԻ-ում անցկացվող ավանդական համամիութենական և միջազգային գիտաժողովները, որոնց մասնակիցներն էին երկրի առաջատար մասնագետները:

Է. Միրզաբեկյանի գիտական աշխատանքները նվիրված են գերբարձր հաճախությունների տիրույթի գերզգայուն ռադիոընդունիչ համակարգերի ուսումնասիրությանը և կիրառմանը: Նրա կողմից առաջարկվել է ԳԲՀ ազդանշանի մոդուլման սկզբունքներն նոր՝ բևեռացման փոփոխությամբ մոդուլման մեթոդը, որը թույլ տվեց զգալիորեն բարձրացնել ընդունիչի զգայունությունը բևեռացված կոմպոնենտի հանդեպ և ընդունել շատ թույլ բևեռացված ազդանշաններ ուժեղ բևեռացված ֆոնի վրա: Այդ մեթոդի հիման վրա ստեղծված ռադիոմետրը առաջին սարքն էր 3,2 սմ ալիքի երկարության ռադիոճառագայթման բևեռացման աստիճանի չափման համար, նրա զգայունությունը այդ ճառագայթման հանդեպ 50 անգամ բարձր էր համեմատած այլ նման սարքերի հետ: Նրա օգնությամբ նոր արդյունքներ էին ստացվել Արեգակի ռադիոճառագայթման վերաբերյալ:

Է. Միրզաբեկյանի մյուս աշխատանքները նվիրված են ԳԲՀ էլեկտրամագնիսական ալիքների ճշգրիտ փուլաչափման ուսումնասիրմանը և կիրառմանը: Նրա կողմից առաջարկված փուլերի տարբերության և նրանց փոքր փոփոխությունների նոր մեթոդը հնարավորություն տվեց ստեղծել բևեռաչափային ինտերֆերենցիոն սարքերի նոր դաս ռադիոլոկացիայում օգտագործման համար:

Է. Յ. Միրզաբեկյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ ՌՖԻ-ում մշակվել և ստեղծվել են ռադիոալեհավաքների բնութագրերի հետազոտման ռադիոաստղագիտական մեթոդներ և համապատասխան սարքավորումներ: Ստեղծված ԳԲՀ ընդունիչ համակարգերը գործնական լայն կիրառություն են գտել տարբեր բնագավառներում, մասնավորապես տիեզերական հետազոտություններում, երկրի հեռազննման, կենսաբանության և այլ ոլորտներում:

Է. Յ. Միրզաբեկյանի ղեկավարությամբ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը դարձել էր ԽՍՀՄ առաջատար կազմակերպություններից մեկը, որը 1960-ից սկսած կատարել է մի քանի տասնյակ կարևորագույն աշխատանքներ ԽՍՀՄ կառավարության հատուկ որոշումներով, ապահովելով տիեզերքի ուսումնասիրության և պաշտպանության խնդիրներին լուծման համար օգտագործվող հեռավոր հաղորդակցության բոլոր ալեհավաքային համալիրների ճշգրիտ աշխատանքը:

Գիտական հասարակությունը ծանաչում էր Է. Միրզաբեկյանին որպես գիտնականի, որը մեծ ուշադրություն էր դարձնում երիտասարդ գիտական կադրերի դաստիարակմանը: Նրա նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ Երևանի պետական համալսարանում ստեղծվեց ռադիոֆիզիկայի ֆակուլտետը:

1971 թ. Է. Միրզաբեկյանը ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974 թ.՝ ակադեմիկոս: Նույն տարում նրան շնորհվել է ՀԽՍՀ Գիտության և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչում: 1974-1976 թթ. նա ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկա-տեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն էր, ՀԽՍՀ ԳԱ նախագահության անդամ, 1976 թ.՝ ՀԽՍՀ ԳԱ փոխարեզիդենտ: Երկարատև բեղմնավոր աշխատանքի համար բազմաթիվ անվճար գիտնականը պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

Կարճատև ծանր հիվանդությունից հետո Է. Յ. Միրզաբեկյանը մահացավ 1980 թ. կյանքի 58-րդ տարում:

Նրա կողմից դրված գիտական ուղղությունները հաջողությամբ շարունակվել են իր աշակերտների ջանքերով. իրականացվել են մի շարք կարևոր նախագծեր տիեզերական հետազոտությունների տարբեր ծրագրերում, մասնավորապես՝ «Պրիորդա», «Վեգա», «Օկեան», «Մետեոր», «Միր»:

Այսօր էլ նրա հոգեզավակ ՀՀ ԳԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի հստակ զարգացումը ակադեմիկոս էմիլ Հայկի Միրզաբեկյանի լավագույն հիշատակն է:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱ նախագահ, ակադեմիկոս
Արսեն ՀԱՆՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրեն

Ժամանակակից գիտության ու տեխնիկայի բուռն զարգացումը, աշխատանքի ու կենցաղի ավտոմատացումը, քիմիացումն ու էլեկտրաֆիկացումը ոչ միայն լիովին փոխել են մարդու ապրելակերպը, այլ նաև փոխել են նրա օրգանիզմի զարգացման օրինաչափությունները: Այս առումով ուշադրության արժանի է աքսելերացիայի երևույթը: Աքսելերացիա բառը լատինական ծագում ունի և նշանակում է արագացում: Տվյալ դեպքում այն վերաբերում է մարդու ֆիզիկական և մտավոր զարգացման տեմպերի արագացմանը: Բանն այն է, որ վերջին 30-40 տարիների ընթացքում երկրագնդի բոլոր անկյուններում նկատվում է մարդկանց ֆիզիկական զարգացման տվյալների (հասակի, քաշի, կրծքավանդակի շրջագծի և այլ հատկանիշների) փոփոխություն: Մարդիկ ներկայումս ավելի արագ են աճում, քան նախկինում, խիստ կերպով արագացել է ոչ միայն մարդու սոմատիկ զարգացումը, այլ նաև նրա մտավոր և հոգեբանական ունակությունները:

Մարդու ֆիզիկական զարգացման ուղ-

ների վրա: Ներկայումս սեռահասունացման պրոցեսները ինչպես աղջիկների, այնպես էլ տղաների մոտ 1-2 տարով ավելի շուտ է սկսվում, քան մի քանի տասնամյակ առաջ: Վաղաժամ սեռահասունացումը չի տանում տղամարդու և կնոջ վաղաժամ ծերացման, այլ ընդհակառակը: Այսօր տղամարդկանց և կանանց մոտ սեռական ֆունկցիաները դադարում են 5-6 տարով ավելի ուշ, քան առաջներում:

Խոսելով աքսելերացիայի առաջացման տեսությունների մասին, ապա գերմանացի գիտնական Կոխը առաջ է քաշել *հելիոգեն* տեսությունը: Ըստ այդ տեսության, վերջին տարիների մարդկանց բնակարանային պայմանները լավանալու հետևանքով նրանք ապրում են ավելի լուսավոր սենյակներում և առավել շատ են ենթարկվում արևի ճառագայթների ազդեցությանը, որն օրգանիզմի վրա ունի խթանիչ ազդեցություն: Այս տեսությունն այնքան էլ հիմնավոր չէ, քանի որ գյուղերում երեխաներն ավելի շատ են գտնվում մաքուր օդում և ավելի շատ են ենթարկվում արևի ճառագայթների ազդեցու-

ԱՔՍԵԼԵՐԱՑԻԱ

(աճող սերնդի ֆիզիկական և մտավոր զարգացման տեմպերի արագացում)

ղությամբ եղած գրականությունը ցույց է տալիս, որ աքսելերացիայի երևույթը նկատվում է մարդու օնտոգենեզի բոլոր տարիներում և ավելի մեծ տեմպերով ի հայտ է գալիս ներարգանդային շրջանում:

Վերջին 30 տարիների ընթացքում զգալի չափով պակասել է անհաս պտուղների թիվը, և, ընդհակառակը, խիստ ավելացել է խոշոր պտուղների թիվը, օրինակ, եթե նախապատերազմյան տարիների 4 և ավելի կգ քաշ ունեցող երեխաների թիվը կազմում էր բոլոր ծնվածների 5 տոկոսը, ապա այժմ այդ թիվը հասել է 45 տոկոսի: Այս համագամաքը դիտվում է որպես դրական երևույթ, քանի որ մեծ քաշով ու բարձր հասակով ծնված երեխաների մոտ աճի ու հասունացման տեմպերն ընթացում են ավելի արագ: Նշվածի մասին է վկայում այն փաստը, որ այսօր 6 ամսական երեխաների միջին քաշը 500 գ-ով, հասակը 1,5 սմ-ով, իսկ 1 տարեկան երեխայի քաշը 1,5-ից 2 կգ-ով, իսկ հասակը 5 սմ-ով ավելի է, քան առաջներում, և կրծքային հասակի երեխաների բացարձակ մեծամասնությունն այսօր ավելի շուտ է նստում, քայլում, նույնիսկ խոսում, քան անցյալ դարում:

Ֆիզիկական զարգացման տվյալներով իրենց հասակակիցներից զգալիորեն առաջ են անցել նաև մյուս տարիքային խմբերի երեխաները: Այսպես, ըստ Դ. Կ. Սոկոլովի տվյալների, ներկայումս 5 տարեկան երեխան 5-7 սմ-ով ավելի բարձրահասակ է և 2 կգ-ով ավելի ծանր է, քան նախկին տարիների նույնահասակ երեխաները:

Այսօր աքսելերացիայի երևույթի խիստ արտահայտման հետևանքով հասակի աճը 7-8 տարով դադարում է ավելի շուտ, քան 50 տարի սրանից առաջ (աղջիկների մոտ այն դադարում է 16-17 տարեկան հասակում, իսկ տղաների մոտ՝ 19 տարեկան հասակում): Մինչդեռ 50 տարի առաջ մարդիկ իրենց բարձր հասակին հասնում էին 25-26 տարեկանում: Ինչ վերաբերում է չափահասներին, ապա աքսելերացիան իր կնիքը դրել է նաև մարդկանց այս խմբի վրա: Այսօր տղամարդիկ 9,5, իսկ կանայք 6,5 սմ-ով ավելի բարձրահասակ են, իսկ քաշով 10 կգ-ով ավելի, քան 100 տարի առաջվա չափահաս մարդիկ:

Ինչ վերաբերում է տարբեր սեռերի մոտ աքսելերացիայի երևույթի դրսևորման առանձնահատկություններին, ապա պարզված է, որ մինչև 11 տարեկան աղջիկների և տղաների զարգացման տեմպերի մեջ էական տարբերություններ չկան, իսկ 11 տարեկանից հետո՝ սեռահասունացման շրջանում, աղջիկները լինում են առավել բարձրահասակ և ունենում են ավելի մեծ քաշ, քան նույն հասակի տղաները: Այս տարբերությունը շարունակվում է մինչև 15 տարեկանը, որից հետո աճի ու զարգացման տեմպերով առաջ են անցնում տղաները: Ուշագրավ է այն փաստը, որ աքսելերացիայի երևույթը միևնույն կոմենսիվության մեջ է արտահայտվում քաղաքի և գյուղի բնակչության միջև, սակայն մի փոքր ավելի է արտահայտվում քաղաքաբնակների մոտ:

Մարդու ֆիզիկական զարգացման տեմպերի արագացումն իր ազդեցությունն է թողել նաև երեխաների սեռահասունացման պրոցես-

յանը, և գյուղական վայրերում առանց այն էլ շատ է արևի ճառագայթների քանակը, քան քաղաքներում: Բայց և այնպես քաղաքաբնակների մոտ աքսելերացիան մի փոքր ավելի է դրսևորվում, քան գյուղական բնակչության մոտ, կամ հարավում երեխաներն ավելի շատ են հելիոգենի ենթարկվում, քան հյուսիսում, բայց և այնպես, երկու տեղերում էլ աքսելերացիան ընթանում է նույն տեմպով:

Գոյություն ունի նաև աքսելերացիայի բացատրման ռադիոալիքային տեսություն: Ըստ այս տեսության հեռուստացույցը, ռադիոն, որոնք ստեղծվել են 20-րդ դարում, իրենց ռադիոալիքների միջոցով խթանիչ ազդեցություն են թողնում երեխաների աճի ու զարգացման վրա, խթանում են աճի հորմոնների արտազատությունն օրգանիզմում և բարձրացնում երեխաների ֆիզիկական զարգացման տեմպերը: Այս տեսությունը ևս հիմնական չէ: Գոյություն ունի նաև աքսելերացիայի բացատրման երրորդ տեսությունը. դա սննդային գործոնի ազդեցությունն է, այսինքն՝ բնակչության կողմից ավելի շատ միս, ճարպ, վիտամինային և այլ սննդամթերքով հարուստ կերամթերքի ընդունումը:

Աքսելերացիայի տեմպերի վրա խիստ ազդեցություն ունեն նաև ներարգանդային զարգացման առանձնահատկությունները, մասնաշաղկապ սպորտային ձևերը, այնպես որ աքսելերացիայի երևույթը շատ բարդ պրոցես է և պայմանավորված է մի շարք կենսաբանական, քիմիական, ֆիզիկական և սոցիալական գործոնների ազդեցությամբ: Այստեղ կարևոր դեր ունի նաև տեղեկատվությունը, ինչը երեխաներն ստանում են կինոների, հեռուստատեսության, գրքերի, ինտերնետի և այլ տեղեկատու աղբյուրների միջոցով:

Ըստ ՀԱԿ-ն տվյալների՝ աքսելերացիայի հիմքում ընկած է նաև հետերոգիսի երևույթը, որն առավել ուժեղ է արտահայտվում այն դեպքում, երբ ծնողները միմյանց հետ ոչ մի ազգակցական կապ չունեն: Օրինակ, ըստ ֆրանսիացի գիտնական Մանգեի տվյալների, նեղ ազգակցական կապ ունեցող ծնողներից ծնված երեխաների հասակը 3,5 սմ-ով ավելի ցածր է, քան միմյանց հետ ազգակցական կապ չունեցող երեխաների հասակը, որը և բացատրում է իմբրիդիզի երևույթով:

Երեխաների և դեռահասների ավելի վաղ սեռահասունացումն ու մարմնական զարգացումը նպաստում են նրանց վաղ ինտելեկտուալ կամ մտավոր կարողությունների զարգացմանը, մի քան, ինչը պետք է անպայման հաշվի առնեն ծնողներն ու մանկավարժները: Այսօրվա երեխայի հետ չի կարելի խոսել՝ ելնելով նրա «ծննդյան թվից»: Աքսելերացիայի երևույթը պահանջում է, որ որոշ փոփոխություններ մտցվեն ծնողների, մանկավարժների և աշակերտների փոխհարաբերությունների մեջ, որ այսօրվա աշակերտն իր ինտելեկտուալ կարողություններով շատ բարձր է կանգնած իր նախորդներից:

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱ ակադ. Լ. Ա. Օրբելու անվ.
ֆիզիոլոգիայի ինստիտուտի
առաջատար գիտաշխատող,
կենսաբանական գիտությունների
դոկտոր

ԱՄԵՐԻԿԱԸԱՅԵՐԻ...

3 Կամավորական շարժումը մեծ ոգևորություն է առաջացրել տարագիր հայության, հատկապես՝ ամերիկահայության շրջանում: Համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրսևորած բարձր գիտակցության շնորհիվ հնարավոր էր դարձել 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում քաղաքական չորս կուսակցությունների միջև անցկացնել համերաշխության բանակցություններ, որոնց ընթացքում էլ կազմակերպվել էր Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ)՝ բաղկացած քաղաքական չորս կուսակցությունների (ՄԴՀ, վերակազմյալ հնչակյան, ՀՅԴ, ՀԱՄ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից: Միությունը (ատենապետ՝ Միհրան Սվազյան) կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծել էր 187 մասնաճյուղ: Ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից այն ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում:

Կարճ ժամանակում՝ ընդամենը վեց ամսում (1917 թ. հունիսի 9-նոյեմբերի 3), ֆրանսիական հովանավորության ներքո սկսված կամավորական շարժման իրենց մասնակցությունը բերելու նպատակով արձանագրվել էր 5.000 ամերիկահայ, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով (մեկ-երկու մեծ փոխադրանավ տրամադրելու փոխարեն հատկացվել էր առավելապես յոթ տասնյակ մարդ փոխադրող, ոչ բավարար տարողության 17 բեռնակիր նավ) մեկնելու հնարավորություն էր ընձեռվել ընդամենը 1.172-ին (որոնցից վերապրել է ընդամենը 250 հայ), իսկ մնացյալը հետագայում զինվորագրվել է ԱՄՆ-ի բանակին՝ կռվելով Գերմանիայի դեմ արևմտյան ճակատներում:

Մեծ մասամբ քեսապցի, սեբաստացի, խարբերոցի, արաբկիրոցի, չնքուշցի, տիգրանակերտցի, հուսեյնիկցի այդ երիտասարդները ներառում էին ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգները: Կամավորագրվածների մեծ մասը կուսակցականներ էին՝ վերակազմյալ հնչակյաններ, դաշնակցականներ, սոցիալ-դեմոկրատ հնչակյաններ, ռամկավարներ: «Արևելյան լեգեոն» կամավորագրված ամերիկահայերի կազմում կային նաև մի շարք բարձրաստիճան զինվորականներ (հրամանատարներ՝ Ջիմ Չանգալյան-կրտսեր եմթասպա, հիսնապետ: Հայկ Ազատյան: Տիգրան Պոյաճյան: Ռուբեն Հեյրամ-կրտսեր եմթասպա, տասնապետ: Գարակյոզյան-տասնապետ: Վահան Չուրկենց: Վաղարշակ վրդ. Արշակունի: Ջոն Շիշմանյան-տեղապահ և այլք):

Ամերիկայի հայ ազգային միության ներկայացուցիչ Ռուբեն Հեյրամն անձամբ ինքն է մասնակցել ամերիկահայ կամավորների ինքնության փաստաթղթերի պատրաստմանը Նյու Յորքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքնասրահում: Միհրան Տասնապետի բնորոշմամբ. «Հազարաւորներ կը ձգէին հանգիստ աշխատանք ու գրասեղան, ապաքով կեանք ու փայլուն ապագայ՝ զօրացնելու համար կորիզը «հայկական բանակին»: ...Եկեղեցւոյ սրահը տեսակ մը ուխտատեղի դարձած էր: Իւրաքանչիւր կամաւոր, Աստուծոյ տան մէջ, իւրովի եւ անձայն կը մընձեղէր աղօթք մը եւ խնդրանք մը ուղղուած Հայուն Աստուծոյն որ զինք ապահով առաջնորդէր մինչեւ կռուի ճակատ, ուր ինք պատրաստ էր իր կեանքը ի սպաս դնելու հայ ժողովուրդի



Կամավոր Ռուբեն Հեյրան (ԱՄՆ)

ազատագրութեան սուրբ դատին»:

Համաձայն Փարիզի Ազգային պատվիրակության և ֆրանսիական կառավարության միջև կայացած պայմանավորվածության, ամերիկահայ կամավորները Նյու Յորքից Բորդո պիտի մեկնեին ֆրանսիական փոխադրանավերով և Ամերիկայի հայ ազգային միության ծախսով: Բորդոյում ֆրանսիական զինվորական ղեկավարության քննությունն անցնելուց հետո նրանց պիտի արձանագրեին ֆրանսիական հրամանատարության ներքո կռվելու համար: Իսկ դաշնակից տերությունների համար պատերազմի բարենպաստ ավարտի դեպքում Կիլիկիայի պաշտպանությունն անցնելու էր հայ զինվորականությանը:

Կամավորագրվածները նախնական վարժանք էին



Ամերիկահայ կամավոր լեգեոնականները

անցնում Փաթերսոնում (Նյու Ջերսիի նահանգ), գրանցվում Նյու Յորքում, ապա նավով մեկնում Բորդո կամ Մարսել (Ֆրանսիա), ապա՝ Պորտ Սաիդ (Եգիպտոս) կամ Մոնարկա (Կիպրոս)՝ զինվելու և ամիսներով վարժանքների մասնակցելու:

Ամերիկահայ կամավորներն «Արևելյան լեգեոնի» իրենց քաջարի հայրենակիցների հետ միասին լուրջ ավանդ են ներդրել 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինում՝ Արարայի անառիկ բարձունքների վրա գերմանա-թուրքական բանակին պարտության և նահանջի մատնելու գործում: Արարայում զոհվեց 22 և վիրավորվեց ավելի քան 70 հայ: Այնուհետև լեգեոնականները մասնակցել են Սիրիայի և Լիբանանի համար մղված մարտերին, որտեղ, սիրիական զորամիավորների անջատումով, «Արևելյան լեգեոնը» վերանվանվել է «Հայկական լեգեոնի» (Legion Armenienne): Լեգեոնական լեյտենանտ Վահան Փորթուգալյանի բնորոշմամբ. «Հայկական Լեգեոնը», որպես զինյալ բանակ, բառիս իրական և ամբողջական իմաստով, առաջին հայկական ռազմական ուժն էր, որը ստեղծվել էր դարեր անց պետական սկզբունքների հիման վրա»:

Ժամանակակցի նկարագրությամբ. «...Արեան դեմ վրժ, ու մահուան դեմ ազատութիւն մընչող առիւծները, վճռականօրէն խոյացան դէպի թրքական խրամատները...: Կարճ եղաւ ընդհարումը ու սաստիկ...: Անարգ թշնամին իր դէմ ցցուած վրիժառու սուլներէն ինքզինք պաշտպանելու անկարող՝ լքեց իր պաշտպանութեան բոլոր լաւագոյն դիրքերը եւ բռնեց փախուստի ճամբան...»:

Սիրիական ռազմաճակատի ընդհանուր հրամանատար, անգլիացի գեներալ Է. Հ. Ալենքին հայ ազգային հաստատություններին հղած պատասխան շնորհակալական հեռագրերում իր գոհունակությունն ու հպարտությունն է արտահայտել Արարայի ճակատամարտում հայ լեգեոնականների ցուցաբերած խիզախության և անձնագոհության առիթով: Այսպես, 1918 թ. սեպտեմբերի 25-ին Եգիպտոսի հայ ազգային միությանը գրել է. «...Հպարտ եմ յայտնելու որ ձեր հայրենակիցները գործնական մասնակցութիւն ունեցան մեր կռիւներուն եւ յաղթութեան մէջ: Արեւելեան Լեգեոնի ֆրանսիացի հրամանատարը եւս գոված է տոկունութիւնն ու եռանդը Հայ զինուորներու, որոնց հաւատարմութիւնը դաշնակիցներ-

րուն հանդէպ ամեն կասկածէ վեր է»:

Դաշնակից տերություններն ու ԱՄՆ-ը, բարձր գնահատելով իրենց հանդէպ հայերի ցուցաբերած անմնացորդ նվիրվածությունը, հայ ժողովուրդին համարել են իրենց «փոքրիկ դաշնակից»:

Այնուհետև լեգեոնականները մասնակցել են Սիրիայի և Լիբանանի համար մղված մարտերին, դաշնակից ուժերի հետ միասին շարժվել դեպի Դամասկոս, Հալեպ, մինչև Պոզանթի լեռները, ապա Պաղեստինի միջով՝ դեպի Բեյրութ, որտեղ, սիրիական զորամիավորների անջատումով, «Արևելյան լեգեոնը» վերանվանվել է «Հայկական լեգեոնի» (Legion Armenienne): Այն մեկ ամիս շարունակ իր գրավման տակ է պահել Պաղեստինը, Լիբանանը:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մեծ Բրիտանիայի և սուլթանական Թուրքիայի միջև կնքված Մուդրոսի զինադադարն ամրագրեց Օսմանյան կայսրության կապիտուլյացիան, և 16-րդ հոդվածի համաձայն՝ թուրքական զորքը պետք է դուրս բերվեր Կիլիկիայից: 1918 թ. դեկտեմբերի 17-19 Հայկական լեգեոնը ոտք է դնում բաղձալի Կիլիկիա՝ վերահսկելու և պաշտպանելու ստրատեգիական հենակետեր, հայաբնակ Ադանան, Այնթապը, Մարաշը, Ուրֆան, Հաճընը: Արդյունքում Հայոց ցեղասպանության հետևանքով Կիլիկիայից տեղահանված շուրջ 120.000 հայ վերադառնում է իր հայրենի օջախները՝ հույսով, որ անգլո-ֆրանսիական ուժերի պաշտպանության ներքո խաղաղությամբ կվերականգնեն իրենց ընդհատված կյանքը Կիլիկիայում: Սակայն 1919 թ. նոյեմբերի 1-ին անգլիական, իսկ 1920 թ. հունվարի 18-ին ֆրանսիական զորամիավորումները հեռանում են Կիլիկիայից՝ հային «յամմենելով իր անագորոյն թշնամիին ձեռքը»:

«Հայկական լեգեոնը» Հայոց ցեղասպանությունից ընդամենը երկու տարի անց ձևավորված առաջին զուտ հայկական զորամիավորն էր՝ տարբեր երկրներից (ԱՄՆ, Եվրոպա, Եգիպտոս, Հարավային Ամերիկա, Ավստրալիա և այլն) ժամանած 4.000-5.000 պանդուխտների մասնակցությամբ, արդիական բանակի կազմությամբ, ռազմամթերքով, թեև ֆրանսիական բանակին առընթեր, սակայն նրանից անջատ, իր յուրահատուկ ազգային դիմագծով: Այն իր կազմությամբ՝ բարձրաստիճան հրամանատարական կազմով, աստիճանակարգված զինվորականներով, զենքով ու զինամթերքով, ռազմական այլ հատկանիշներով ու կարգապահությամբ լիովին համապատասխանում էր ժամանակի առաջավոր բանակներին: Հայ կամավորների թվի ստվարացումով 1918 թ. հոկտեմբերի կեսերին Բեյրութում ստեղծվել է լեգեոնի արդեն 4-րդ գումարտակը Կիպրոսից ժամանած պահեստայիններից: 1920 թ. Մարաշում, Սիսում, Պոզանթիում, Ուրֆայում, Այնթապում (ընդհատումներով 314 օր), Հաճընում (8-ամսյա գոյամարտ) հայ զինվորն ու ժողովուրդը հերոսական դիմադրություն են ցույց տվել քեմալական հորդաներին, սակայն զոհերի թիվը գերակշիռ էր:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված ֆրանս-քեմալական դաշնագրով Ֆրանսիան պաշտոնապես ամրագրեց իր նահանջը՝ Կիլիկիան թողնելով թուրքական տիրապետության ներքո՝ միաժամանակ վերջինիս տրամադրելով մեծ քանակությամբ զենք, զինամթերք, հանդերձանք և այլն:

Կիլիկիայի պարպումը հայերին ստիպեց կրկին արտագաղթել: Պատմաբան Լեոն այս առիթով գրել է. «Կիլիկիան դատարկվում էր հայությունից, ինչպես դատարկվել էր բուն Հայաստանը»:

Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
ավագ գիտաշխատող

ՃՅ՝ Մ. Շի օձԱԲ՝ Կ »ն՝ Էի Յ 1 օնԿ՝նԱ

1 ստվարածավալ մենագրությունը, որը լույս է տեսել 1972-ին՝ ռուսերեն: Օգտագործված մեծաքանակ փաստացի նյութի վերլուծությամբ և ընդհանրացումների բարձր մակարդակով այդ գիրքը հիմնարար ներդրում է Հայկական հարցի ուսումնասիրության բնագավառում:

Հայաստանում պրոֆեսոր Սարգսյանն առաջիններից է ձեռնամուխ եղել թուրքական պատմագրության մեջ լայն տարածում գտած՝ Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրող հայեցակարգերի քննական վերլուծությանը, դրանց հակագիտական բնույթի բացահայտմանը: Նրա և Ռուբեն Սահակյանի հեղինակած «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ» գիրքը (1963) վերահրատարակվել է Թեհրանում, թարգմանվել անգլերեն և հրատարակվել նաև ԱՄՆ-ում (1965):

Դեռևս խորհրդային տարիներին պրոֆեսոր Սարգսյանը սկսեց համակողմանի ուսումնասիրել նաև 1920 թվականի հայ-թուրքական պատերազմին առնչվող բազմաթիվ արտաքին հանգամանքների բարդ կծիկը: Նա առաջիններից էր, ով ձեռնամուխ եղավ այդ խնդիրների վերաբերյալ մոսկովյան և երևանյան արխիվների գաղտնի ֆոնդերում պահվող հարուստ, սակայն և հաճախակի իրարամերձ բնույթի փաստավավերագրական նյութի քննական հետազոտմանը: Նրա տարիների լարված աշխատանքի արդյունքը հնարավոր եղավ արժեքավոր մենագրության տեսքով հրատարակել միայն անկախ Հայաստանում՝ «Դավադիր գործարք. Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա (1995)» խորագրով: Նրա գրչին են պատկանում նաև «Աշխատավոր զանգվածների դրությունը ժամանակակից Թուրքիայում» (1955), «Օսմանյան կառավա-

րության հողային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում ժժ դարի երկրորդ կեսին» (1957), «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և ազգային-ազատագրական պայքարը Թուրքիայում (1918-1922)», (1958):

Սարգսյանը 1950-1980-ականների հայկական գիտական կյանքի գործուն մասնակիցներից էր: Հետաքրքիր գեկուցումներով նա հաճախակի հանդես է եկել գիտաժողովներում, այդ թվում՝ միջազգային: Նա ակտիվորեն մասնակցել է գիտական բանավեճերին ու քննարկումներին, եղել մի շարք խմբային մենագրությունների ու հոդվածների ժողովածուների հեղինակակից և պատասխանատու խմբագիր, ղեկավարել է և ընդդիմախոսել բազմաթիվ ատենախոսություններ, իր հարուստ գիտելիքները փոխանցելով տասնյակ աշակերտների և կրտսեր գործընկերների:

1990-ականների կեսերին մտավորականության համար Հայաստանում ստեղծված ծանր կենցաղային պայմանները ստիպեցին Սարգսյանին տեղափոխվել ԱՄՆ: Սակայն օտարության մեջ ևս նա շարունակեց անխոնջ ծառայել գիտությանը. օվկիանոսի այն ափից երևան էին հասնում նրա հոդվածները Թուրքիայի հակահայ քաղաքականության տարբեր դրսևորումների վերաբերյալ, որոնք պարբերաբար լույս էին տեսնում սփյուռքահայ մամուլի էջերում: Հայաստանի թուրքագետները, պրոֆեսոր Սարգսյանի բազմաթիվ գործընկերները և աշակերտները միշտ վառ կպահեն գիտության երախտավորի և բարի մարդու կերպարը:

Երվանդ Սարգսյանն իր մահկանացուն կնքեց 2010 թ. մարտի 11-ին Գլենդելում:

Ռուբեն ՍԱՅՐԱՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

[illegible]

Արման Քուչուկյանը ծնվել է 1932թ. դեկտեմբերի 11-ին Սոֆիայում (Բուլղարիա), որտեղից 1946թ. նրա ընտանիքը հայրենադարձվեց Հայաստան: 1957թ. ավարտելով ԵՊՀ ֆիզմաթ ֆակուլտետը, Ա. Քուչուկյանը աշխատանքի ընդունվեց Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, որտեղ անցավ երկար ծանապարհ՝ տեխնիկեց մինչև ինստիտուտի գլխավոր ինժեներ: 1971թվից մինչև այժմ նա հանդիսանում է կարևորագույն մշակումների գլխավոր կոնստրուկտոր:

Ա. Քուչուկյանի ղեկավարությամբ կատարված առաջին աշխատությունները:



**սը հանդիսանում էին ԵրՄՄԳՀԻ մշակումները:
Նրանք ցուցադրվել են բազմաթիվ ցուցահանդես-
ներում և արժանացել բարձր գնահատականի:**

EC ՅՅՄ Հարքի գիտական հիմքերի և նոր տեխնիկական լուծումների ստեղծման համար, որոնք դրվել են EC ՅՅՄ մշտական հիմքում, դրանց արտադրման արդյունաբերական հենքը ստեղծելու և տնտեսության մեջ ներդնելու համար Ա. Քուչուկյանին 1983թ. շնորհվեց Լենինյան մրցանակ՝ հեղինակային խմբի կազմում: EC ՅՅՄ գծով մշակումներում մասնակցում էին շուրջ 800 գիտախմբներական մասնագետներ, որոնք ԵՊՀ և ԵՊՃՀ շրջանավարտներ էին:

Հետխորհրդային առաջին տարիներին Ա. Քուչուկյանը համախմբեց և ուղղեց իր կուլեկտիվի ջանքերը հանրապետության համար խիստ անհրաժեշտ ինֆորմացիոն

Հաշվողական համակարգերի նշանավոր ճարտարագե- ղիականներ

տանքը «Մարշրուտ-1» հաշվիչ համալիրն էր (1972թ.), որը մեծ ծանաչում գտավ, արժանալով ՀՍՄՀ պետական մրցանակի (1974թ.) և շահագործվեց Մոսկվայի երկաթուղային հանգույցում: Նման համակարգի նախագծման հիմնավորումը և տեսական ընդհանրացումը հիմք հանդիսացավ Ա. Քուչուկյանի դոկտորական ատենախոսության թեզի համար (1979թ.):

70-ական թ.թ. սկզբներին հայ մասնագետները Ա. Քուչուկյանի ղեկավարությամբ սկսեցին EC-1030 համալիրի մշակումը, որն անմախքնթաց բալլ էր հայրենական հաշվիչ մեքենաների ստեղծման գործում՝ դարձնելով Ա. Քուչուկյանին ՀՍՄՀ պատական մոզմանակի կոնկանի ղափնեկիր:

Այդ տարիներին ինստիտուտը ձեռնամուխ եղավ միջին արտադրողականության էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ) նախագծմանը, որոնք համատեղելի էին IBM 360, 370, 4300 ընտանիքների ԷՀՄ-ների հետ: Ա. Քուչուկյանի ղեկավարությամբ 1974-79 թթ. ստեղծվեց երկրորդ ԷՀ-1045, իսկ այնուհետև, 1981-84 թթ. նաև ԷՀ-1046 ԷՀՄ-ները: 1983թ.-ից նրա ղեկավարությամբ նախագծվեցին ԷՀ-1077 և ԷՀ-1170 ԷՀՄ-ների և երկերեք մեքենայական ԲԿ-2Մ-45, ԲԿ-2Մ-46, ԲԿ-3Մ-45, ԲԿ-46 և երկրպրոցետրային ԲԿ-2Մ-45, ԲԿ-2Մ-46 համալիրները՝ օժտված բարձր արտադրողականությամբ և խափանումներին նկատմամբ բարձր կայունությամբ: Այսօրեմիկոս Անատոլի Դորոժնիցինի կարծիքով՝ դրանք ամենարտադրողական և հուսալի համալիրներն էին միասնական մեքենաների ընտանիքում:

Ա. Բուչուկյանի ղեկավարությամբ մշակվեց և արտադրվեց ԽՅՄ եզակի EC-2345 մատրիցային պրոցեսորը, որը ավելի քան 100 անգամ բարձրացնում էր ինստիտուտի ԷՄՍ-ների արտադրողականությունը որոշ դասի խիստ կարևոր խնդիրների լուծման ժամանակ:

Վերը նշված բազմամյա գործունեության ընթացքում ի հայտ եկավ Ա. Զուչուկյանի գիտական, ճարտարագիտական և կազմակերպչական մեծ տաղանդը: Դեկավարելով մասնագետների մեծ կոլեկտիվ և լինելով հմուտ գլխավոր ճարտարագետ՝ նա հասցնում էր զարգացնել և ներդնել նոր մոտեցումներ և մտահղացումներ, դաստիարակել մասնագետների նոր սերունդ: Իր բացառիկ խստապահանջությամբ, համբերատարությամբ և հեռանկարային մտածողությամբ նա կարողացավ ստեղծել լավագույն հաշվողական համակարգերը՝ ներմուծելով յուրաքանչյուր մշակված մեջ նորագույն մոտեցումներ: Նրա տպագրած գրքերը և հոդվածները ստացան լայն տարածում:

EC ՅԵՄ շարքի ԵՐՄԱԳՅԻ մշակումներն ունեցան մեծ նշանակություն գիտության և տեխնիկայի զարգացման համար ինչպես ինստիտուտում, այնպես էլ զործարաններում (ԵՐՄԱԳՅԻ փորձարարական, «Էլեկտրոն», Կազանի «ԷԶՄ», Վիննիցայի Ռադիոտեխնիկական): Պետք է նշել, որ ԽՍՀՄ-ում EC ՅԵՄ շարքի արտադրված ԷԶՄ-ների 40 տոկոս-

համակարգչային համակարգերի մշակմանն ու ստեղծմանը: Դրանց թվին էր պատկանում «Փառոս» համակարգը, որը հետագայում վերածվեց պետական ծրագրի (որպես անապահով ընտանիքների օժանդակող մշտական գործիք), «ՄԻՂԱՍ» համակարգը (2001թ.), որն ապահովեց 230 հիվանդանոցների և պոլիկլինիկաների տվյալների կենտրոնական բազայի վարումը: Տարբեր հաստատութայինների պատվերներով իրականացվեց ինֆորմացիոն համակարգ, որը կարգավորում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինների գործունեությունը, ինչպես նաև նրանց կենտրոնական արխիվի գործառույթները (2004թ.): Մշակվեցին անձնագրերի տրամադրման և Հայաստանի բնակչության պետական ռեգիստրի համակարգը, որը մեծ նշանակություն ունի ազգաբնակչության և պետական մարմինների համար (2006թ.), ընտրողների ռեգիստրը նույնպես ապահովում է ցանկացած ընտրության հիմքը հանդիսացող ընտրատարածքներում ընտրացուցակների կազմումը և ձևաչափումը (2007թ.): Նախաձեռնության կարգով մշակվել է կույրերի ինֆորմացիոն ապահովման «ԱՐԵՎԷ համակարգը (2004թ.-ընթացիկ), որն իրագործվել է ազգային լեզվով մշակված «Հայակն» սինթեզատորի և ինքնատիպ տեխնոլոգիայով աշխատող համակարգչային ծրագրով: Լինելով ինքնուսուցվող՝ համակարգը որոշ ցուցանիշներով գերազանցում է առ այսօր գոյություն ունեցող համակարգերին: Համակարգի շնորհիվ ինֆորմացիոն հաղորդակցման հնարավորություն են ստացել շուրջ 900 տեսողական հաշմանդամներ: 2010-2012թթ. ընթացքում Հայաստանի 1400 հանրակրթական դպրոցներում ներդրվեց մշակման համակարգչային հմտությունների ձեռքբերման և թեստավորման «Ուսում» համակարգը:

Արման Քուչուկյանի գործունեությունը միշտ արժանացել է բարձր գնահատականի: Նա պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով, Լեհաստանի կառավարության «Վաստակի համար» առաջին կարգի ոսկե շքանշանով և բազմաթիվ այլ պարգևներով: Նա Հայաստանի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ է (1981թ.), Երևանի պատվավոր քաղաքացի (1986թ.), պրոֆեսոր (1987թ.), և 1996 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Հնորիավորելով ակադեմիկոս Արման Քուչուկյանին հրաշալի հորեյանի առթիվ, հանրապետության գիտական հանրությունը, գործընկերները ցանկանում են նրան քաջառողջություն և ստեղծագործական նորանոր նվաճումներ:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԴԴ ԳԱԱ Նախագահ, ակադեմիկոս
Յուրի ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս
Նորայր ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտ. բաժանմունքի պակադեմիկոս-բաղադրող

¶Çi Ý³ İ³ ÝÝ ³ é³ ç³ ñİáõÜ ¿

**Արդյոք
աղքատ է մեր
հանրապետությունը
բնական
ռեսուրսներով**

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից տարեկան 20 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում կորստի մատնվող օգտակար տարրերի արժեքը՝ հաշվարկված հիմնականում 2007թ. զներով (բացառությամբ սկանդիումի), կազմում է 1 մլրդ 223,2 մլն դոլար, սակայն շարունակվող ճգնաժամի պայմաններում 2011-2012թթ. զներով հաշվարկելիս դրանց (կորստի մատնվող տարրերի) արժեքը կազմում է 3 մլրդ 433 մլն դոլար, որն առաջին հաշվարկից մեծ է ավելի քան 2,8 անգամ: Դե՛, հարգարժան ընթերցողներ, դուք որոշեցե՛ք, թե ինչու են աղքատ մեր հանրապետությունն ու մեր ժողովուրդը:

Մեր հարգարժան նախագահներից հաճախ եմ լսել այն արտահայտությունը, որ «Մեր հանրապետությունն աղքատ է բնական ռեսուրսներով»։ Դե՛, իհարկե, եթե մենք միայն մեկ օբյեկտից (հանքավայրից) տարեկան միլիարդավոր դոլարների «բնական ռեսուրսներ» լցնենք ծորերն ու գետերը, մի մասն էլ նվիրենք օտար զնորդներին, իհարկե, աղքատ կլինենք։ Ո՞վ կարող է նման բան անել։ Ո՞ր երկիրը կարող է իրեն թույլ տալ նման «շռայլություն»։ Չե՛ որ այդ հարստությունը համաժողովրդական է, պատկանում է Զայաստանում ապրող ամբողջ ժողովրդին և ոչ թե ինչ-որ մեկին։

Աղյուսակ 2-ից տեսանելի է, որ պոչամբարներ թափվող և փոշիացվող օգտակար տարրերի արժեքի առյուծի բաժինը պատկանում է հազվագյուտ հողատարրային սկանդիումին, որի գինը միջազգային շուկայում 2001թ.-ից մինչև 2011թ.-ը աճել է ավելի քան 9 անգամ և, դեռևս, աճելու միտում ունի (այդ տարրը շատ կարևոր է զարգացող արդյունաբերության, հատկապես ռազմական և կոսմիկական արդյունաբերությունների համար): Նշենք, որ մասնագետների կողմից «արդյունաբերության վիտամիններ» համարվող հազվագյուտ տարրերի և հազվագյուտ հողատարրերի խմբին պատկանող մետաղների մեծ մասը հայտնաբերված է մեր երկաթաքարային և այլ կազմավորումների հանքավայրերում, որոնց մենք կանդրադառնանք նոտ ապագայում:

Փոշխացվող չեն համարվում խտանյութեր անցած պղինձը, մոլիբդենը և ոսկին, որոնք խտանյութերի վաճառքի ժամանակ գնահատվում են: Փոշխացվող են համարվում այդ նույն՝ պղինձ, մոլիբդեն և ոսկի տարրերի թերկորզման հետևանքով պոչամբարները թափված քանակները՝ դրանք սկզբնական քանակի 20% պարունակությունները: Մյուս բոլոր տարրերը՝ ռենիումը, արծաթը, սելենը, տելուրը, քիսմուտը, վանադիումը, սկանդիումը, երկաթը և ծծումբն ամբողջությամբ, անկախ նրանից, թե դրանցից ո՞րը և ո՞ր մասն է անցել խտանյութ, համարվում են փոշխացված, քանի որ դրանց դիմաց լեռնահանքային ձեռնարկությունը ոչինչ չի ստանում, համեմայն դեպս՝ այժմ ոչինչ չի ստանում: Ինչո՞ւ ենք գրում «համեմայն դեպս չի ստանում»: Գրում ենք այն պատճառով, որ ոչ մի երկիր, ոչ մի խելոք մարդ իրավունք չունի և չի կարող հանդուրժել տարեկան մի քանի հարյուր միլիոն կամ միլիարդ դոլարի հարստության փոշիացումը՝ օտարներին նվիրելն ու պոչամբարներ թափելը: Մենք բազմիցս գրել և նույնիսկ մի քանի անգամ առաջարկությամբ դիմել ենք ՀՀ կառավարությանը՝ Ձանգեզուրի կոմբինատի պոչամբարների վերամշակման կապակցությամբ, օգտակար բոլոր՝ կորզելի քանակներով, տարրերը կորզելու և ժողովրդական տնտեսության մեջ ներգրավելու հարցով: Այդ տարրերը կորզելու պարագայում դրանք կդառնան օգտակար, իսկ պոչամբարներում թողնելու պարագայում՝ թույն և խիստ վտանգավոր մեր ժողովրդի համար: Այդ տարրերը կորզելու համար անհրաժեշտ է մշակել և ներդնել պոչամբարներից օգտակար տարրերը կորզելու՝ հարստացնելու, տեխնոլոգիա և այն էլ բարձր ու գերբարձր տոկոսներով (94-95) կորզելու տեխնոլոգիա, որը կարող են կատարել ՀՀ ԳԱՍ Կապանի հանքահարսացման և մետալուրգիայի լաբորատորիան և նրա ունակ ղեկավար պատոն Կլիմենտ Ֆակուրամո:

Նշենք, որ վերջ նշված միլիոն-միլիարդավոր դոլարների փոշիացում տեղի չի ունենա, եթե հենց այժմ, անհապաղ, նույն լաբորատորիայի կողմից մշակվեն ու ներդրվեն հանքաքարերում առկա պիրիտ և մագնետիտ հանքանյութերի, ինչպես նաև շատ կարևոր ու շատ թանկարժեք սկանդիում և վանադիում տարրերի հանքաքարերից խտանյութերի մեջ կորզման տեխնոլոգիաներ և ստացված խտանյութերից մետալուրգիական փուլով վերամշակմամբ՝ բոլոր օգտակար տարրերը բարձր տոկոսներով կորզման տեխնոլոգիաներ։ Այդ մշակումներն ունենալուց հետո Սյունիքի մարզում կառուցել ժամանակակից ու գերժամանակակից, բազմապրոֆիլ մետալուրգիական գործարան, որտեղ հնարավոր կլինի ոչ միայն կորզել օգտակար տարրերը, այլև ըստ շուկայի պահանջի մաքրել, գտել ու անհրաժեշտության պարագայում գերզտել (մինչև 99,9999%) կորզված տարրերը, քանի որ վերջիններս իրենց սովորական տեսակներից (99%-ով գտվածներից) թանկ են մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր անգամներ։ Օրինակ. սովո- ➤7

Արդյոք աղբա՞տ է...

➤6 ռական երկաթի մեկ տոննան 2007թ. գնեցող արժեք 300 դոլար, իսկ գտված (99,99%-ով) երկաթի մեկ տոննան՝ 16800 դոլար (գտված երկաթն իր սովորական տեսակից թանկ արժեք 56 անգամ), սովորական մաքրության ռենիումի մեկ տոննան՝ 7.777.700 դոլար, իսկ գերզտված (99,9999%-ով) տեսակինը՝ 900 մլն դոլարից մինչև մեկ մլրդ դոլար, այսինքն՝ գերզտված ռենիումն իր սովորական տեսակից թանկ էր 116-ից 128 անգամ:

Մետալուրգիական գործարան անպայման պետք է կառուցվի, հակառակ դեպքում մյուս բոլոր աշխատանքներն անհմաստ են դառնում: Մետալուրգիական գործարանը պետք է կառուցվի ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիայի կողմից նախկինում մշակված տեխնոլոգիաների հիման վրա: Այդ մշակումների արդյունքներն են.

-մոլիբդենի խտանյութերի վերամշակման պարագայում մոլիբդենի մոլիբդենիտ հանքանյութից (MoS_2) կորզվում են ինչպես մոլիբդեն մետաղը՝ 98,5%-ով, այնպես էլ ծծումբը ծծումբ տարրի կամ ծծմբային նատրիումի տեսքով, որտեղ ծծմբի կորզման աստիճանը կազմում է 96-98%: Մոլիբդենի հետ զուգակցվող շատ թանկարժեք, ռազմավարական նշանակության ռենիում տարրի կորզման աստիճանը կազմում է 96%: Այս տեխնոլոգիան ստացել է գյուտարարության մեկ հեղինակային վկայական և եվրասիական արտոնագիր «Ժնև 2003» գյուտերի, նոր տեխնիկայի և ապրանքների 31-րդ միջազգային ցուցահանդեսում,

-պղնձի խտանյութերի համալիր վերամշակման նոր՝ էլեկտրաքիմիական տարրալուծման եղանակով պղնձի խալկոպիրիտ ($CuFeS_2$) հանքանյութից պղինձը կորզվում է 97-98%-ով, որտեղ պղինձ մետաղի պարունակությունը կազմում է 99,8%: Հանքանյութում պարունակվող երկաթը կորզվում է 96-97%-ով երկաթի արջասպի տեսքով (պղնձի խտանյութի ավանդաբար ընդունված եղանակով վերամշակման ժամանակ երկաթը չէր կորզվում և ամբողջությամբ թափվում էր թափոնակույտեր): Ծծումբը կորզվում է ծծումբ տարրի տեսքով, որտեղ կորզումը կազմում է 95-96%: Մնացորդային խարամներում կուտակված ազնիվ մետաղները գործնականում կորզվում են ամբողջությամբ: Այս եղանակը պաշտպանվել է գյուտարարության երկու հեղինակային վկայականներով, քանի որ ծծումբ և երկաթ տարրեր են կորզվել նաև ծծմբի հոսքառ ափսոս (FeS.)

հանքանյութից, որտեղ ծծմբի կորզման աստիճանը կազմում է 95-96%, իսկ երկաթինը՝ 96-97%:

Խտանյութերի վերամշակման տեխնոլոգիաները երկու դեպքում էլ ապահովում են շրջակա միջավայրի պահպանության բարձր աստիճան (էկոլոգիապես մաքուր են):

Մագնետիտ երկաթաքարի խտանյութերը, որոնք ստացվելու են Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի հանքաքարերի մշակման արդյունքով, կուղարկվեն Արտվազի և Սվարանցի երկաթի հանքավայրերի հումքային հենքի վրա կառուցված սև մետալուրգիայի մետալուրգիական գործարան, որը, մեր տեսակետով, նույնպես պետք է կառուցել Սյունիքի մարզում՝ Գորիսի շրջանում, Սվարանցի հանքավայրի մոտակայքում, Շինուհայր բանվորական ավանի տարածքում:

Ավարտելով սույն հոդվածը՝ գտնում ենք, որ ՀՀ կառավարությունը չպետք է անտեսի ՀՀ ԳԱԱ Կապանի հանքահարստացման և մետալուրգիայի լաբորատորիան, պետք է հանձնարարություններ տա՝ նախկին մշակումները, որոնցով շահագործող հետաքրքրություններ էին ցուցաբերում և գրանտներ էին տրամադրում Ռուսաստանի Դաշնությունն ու Ամերիկայի Միացյալ Նահանգները, ավելի ևս կատարելագործելու, կորզման ենթակա օգտակար տարրերի շրջանակներն ընդարձակելու, ստացված մշակումները կիսագործարանային պայմաններում փորձարկելու և մետալուրգիական գործարանի կառուցման առաջարկով դիմելու ՀՀ կառավարությանը:

Հրաչյա ԱՎԱԳՅԱՆ
երկրաբանահանքաբանական գիտությունների դոկտոր



Շայոց ցեղասպանության հուշահամալիր Սևրում

Մխիթարյան միաբանության Սևրի Սամուել Մուրատեան վարժարանային շենքերում նախատեսված է հիմնել Շայոց ցեղասպանության հուշահամալիր՝ բաղկացած թանգարանային բաժնից և հետազոտական ու դասախոսական կենտրոնից: Կենտրոնը միտված է լինելու ցեղասպանությունների և մարդկության դեմ կատարված ոճիրների ուսումնասիրություններին, համանման թեմաների շուրջ քննարկումների կազմակերպմանը և անցկացմանը, ինչպես նաև ֆրանսահայության քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի, ֆրանսիական հողի վրա նրանց հարյուրամյա գործունեության և քաղաքացիական հանձնառության լուսաբանումներին:

«Ցեղասպանության կենտրոնական հարցն անդին, որ հայերու՝ Ֆրանսա հաստատվելուն ծննդյան վկայագիրն իսկ է, մեր ծրագրի նպատակն է Մայր քաղաքի մեջ հիմնարկացնել հայկական մերկայությունը և փորձառությունը:

Նախքան քաղաքացիական ծրագիր մըն է, ուժակամության տեր, գիտական, դեպի ապագան հարող, որ պարզ թանգարանային և հուշարանային շրջանակն անդին կանցնի», ասել է հիշյալ ծրագիրն իրագործող «Սևր-2015» ընկերակցության նախագահ Ժիրայր Կերկերյանը:

Ծրագրի սկիզբը լինելու է անկախ հիմնադրամի հաստատումը, որն օգտվելու է Մխիթարյանի անշարժ գույքի եկամուտներից, որոնք տեղակայված են Փարիզի մերձակայքում՝ շրջապատված հայահոծ համայնքներով: «Սևր-2015» ընկերակցությունից տեղեկացնում են, որ ցեղասպանության հուշահամալիրի ծրագիրը հիմնված է ազգային մեծածավալ աջակցության վրա՝ գործունեության թափանցիկության սկզբունքով:

Համալիրի բացումը նախատեսված է 2015 թվականին, Ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Մ. Բ.

ԱՎԱՂԵՄԻԿՈՍ ՎԱՂԻՄԻՐ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մեխանիկայի հայկական դպրոցը ծանր կորուստ կրեց. ս.թ. հունվարի 3-ին վախճանվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վաղիմիր Սարգսի Սարգսյանը:

Վաղիմիր Սարգսյանը ծնվել է 1935 թ. հունիսի 25-ին Նախիջևանի Ջուլֆա քաղաքում: 1938թ. նրա ընտանիքը տեղափոխվում է Երևան: 1957 թ.



ավարտելով Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ֆիզմաթ ֆակուլտետի մեխանիկայի բաժինը, նա աշխատանքի է նշանակվում մեխանիկայի ամբիոնում: 1959 թ. ուսումը շարունակում է ասպիրանտուրայում՝ ակադեմիկոս Ն. Գ. Գրիգորյանի ղեկավարությամբ, և 1962 թ. Մոսկվայի համալսարանում պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը: Շարունակելով գիտական ակտիվ և բեղմնավոր գործունեությունը, նա 1972 թվին Կազանի համալսարանում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով ֆիզմաթ գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Պրոֆեսոր Վ.Ս. Սարգսյանը 1986 թվին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Վաղիմիր Սարգսյանը դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի գծով հայտնի մասնագետ էր: Նրա 300-ից ավելի գիտական աշխատանքները վերաբերում են անիզոտոպ, անհամասեռ մարմինների մեխանիկայի մի շարք կարևոր խնդիրներին՝ կոմպոզիտ նյութից պատրաստված կառուցվածքների՝ ձողերի, սալերի, թաղանթների, ծռման, տատանումների, կայունության, օպտիմալ նախագծման հարցերին, առաձգականության մաթեմատիկական տեսությանը, առաձգական վերադիրներից մասիվ առաձգական մարմիններին ուժի փոխանցման խնդիրներին, տարբեր կորագծային անիզոտրոպիայով օժտված մարմինների առաձգականության տեսությանը եզրային խնդիրների ուսումնասիրությանը: Հիմնարար նշանակություն ունեն առաձգականության տեսության խնդիրների լուծման համար նրա կողմից առաջարկված և զարգացված ֆիզիկական ու երկրաչափական փոքր պարամետրերի մեթոդները, ինտեգրալ ֆեյերենցիալ հավասարումների, ֆունկցիոնալ անալիզի կիրառությունների հիման վրա մշակված լուծման մոտավոր եղանակները: Գիտական հետազոտությունների հիմնական արդյունքներն ամփոփվել են Վ. Սարգսյանի 7 մենագրություններում, որոնցից երկուսը հրատարակվել են Բրատիսլավայում (Սլովակիա): Հիշատակության արժանի են հատկապես նրա «Некоторые задачи математической теории упругости анизотропного тела. Ереван, ЕГУ, 1976, 534 с.», «Контактные задачи для полуплоскостей и полос с упрягими наклесками. Ереван, ЕГУ, 1983, 260 с.» մենագրությունները, որոնք մինչ այժմ էլ կարևորվում են դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայով զբաղվող գիտնականների կողմից:

Մեծ է Վ. Սարգսյանի ավանդը մեխանիկայի հայկական դպրոցի զարգացման գործում: Նրա անմիջական գիտական ղեկավարությամբ և խորհրդատվությամբ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ են պաշտպանել շուրջ 60 գիտնականներ ինչպես մեր երկրից, այնպես էլ՝ արտասահմանից՝ Սլովակիայից, Վիետնամից, Լեհաստանից, Եգիպտոսից, Սիրիայից, Ուզբեկստանից:

Նշանակալից է Վ. Սարգսյանի գիտականավերաջակց գործունեությունը:

Նա բազմիցս եղել է մեխանիկայի և կիրառական մաթեմատիկայի գծով միջազգային գիտաժողովների կազմկոմիտեի նախագահ, ԽՍՀՄ գիտության և տեխնիկայի գծով պետական կոմիտեի «Կոնստրուկտիվ ամրություն և քայքայում» գիտական խորհրդի անդամ: Երկար տարիներ ղեկավարել է ԵՊՀ-ում գործող դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա մասնագիտությունը ֆիզմաթ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան շնորհող մասնագիտացված խորհուրդը: Եղել է ԵՊՀ գիտական տեղեկագրի և ՀՀ ԳԱԱ տեղեկագիր «Մեխանիկա» հանդեսի խմբագրական կոլեգիաների անդամ: 1993-1994 թվերին նա ՀՀ ԳԱԱ մեխանիկայի, ինֆորմատիկայի և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնակատարն էր և ԳԱԱ նախագահության անդամը, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի և մեխանիկայի պրոբլեմային խորհրդի նախագահի տեղակալը, արժանացել է ՀՀ ԳԱԱ նախագահության «Վաստակագիր»:

Ակադեմիկոս Վ. Ս. Սարգսյանը ծանաչված գիտնական էր նաև արտասահմանում: Նա ընտրվել է Սլովակիայի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ, մեխանիկայի և մաթեմատիկայի համագործակցության միջազգային ընկերության անդամ, ՀՀ տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի նախագահ, Սլովակիայի ինժեներական ակադեմիայի հիմնադիր-անդամ, գիտությունների «Արարատ» միջազգային ակադեմիայի անդամ (Փարիզ), կառուցվածքների օպտիմիզացիայի միջազգային ընկերության անդամ, նախկին ԽՍՀՄ գիտնականների հետ համագործակցության միջազգային ակադեմիայի փորձագետ (Բելգիա):

Ակադեմիկոս Վ.Ս. Սարգսյանը մեծ ներդրում ունի Հայաստանում մեխանիկայի դասավանդման և զարգացման գործում, լինելով ԵՊՀ երկարամյա, վաստակաշատ դասախոսներից մեկը: Մայրենի լեզվով հրատարակած նրա բազմաթիվ ուսումնական ձեռնարկները՝ նվիրված հոծ միջավայրի մեխանիկային և հարակից բնագավառներին, էական նպաստ են բերել բարձրագույն դպրոցում մեխանիկայի դասավանդման գործին: 1978-2001թթ. նա հոծ միջավայրի մեխանիկայի մաթիմոնի վարիչն էր, 1988-1990թթ. և 1996-2007թթ. եղել է ԵՊՀ մեխանիկայի ֆակուլտետի ղեկավար, իսկ 1990-1992թթ. նա ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորն էր:

Ակադեմիկոս Վ.Ս. Սարգսյանի գիտամակավորական գործունեությունը արժանացել է բարձր գնահատականի: 1981թվին նրան շնորհվել է գիտության վաստակավոր գործիչի կոչում, իսկ 1999թվին պարգևատրվել է Անանիա Շիրակյանի մեդալով:

Ակադեմիկոս Վ.Ս. Սարգսյանի մահը մեծ կորուստ է հայկական գիտական մտքի և բարձրագույն դպրոցի համար: Մեծ գիտնականի և քաղաքացու գործն ու հիշատակը վառ կմնան նրա բազմաթիվ ընկերների, աշխատակիցների սրտերում:

Վահրամ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ մեխանիկայի
ինստիտուտի տնօրեն, ֆ.մ.գ.դ.
Արա ԱՎԵՏԻՍՅԱՆ
Հայաստանի տեսական և
կիրառական մեխանիկայի
ազգային կոմիտեի նախագահ,
ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ
Ս. ՋԻԼՍԿՅԱՆ
դոցենտ, ֆ.մ.գ.թ.

"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА